ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ

Թեմի ու նորա կառավարութեան բարեփոխութիւններ։ *Մայն 1914 թ. փետրվար ամսում կայացել է առանձին խորհրդակցութիւն Ֆինլանդիայի Սերգէյ արքեպիսկոպոսի նախագահութեամբ և Կիևի ու Մոսկուայի մետրոպոլիտների մասնակցութեամբ՝ վերաքննութեան ենթարկելու թեմական կառավարութեան բարենորոգութեան նախագիծը։ Խորհրդակցութիւնը յանգել է հետևեալ եզրակացութեան։*

Առաջնորդների ու նոցա յաջորդների կարգումն ու արձակումն կատարւում է Ս. Սինոդի որոշումով՝ և Բարձրագոյն հաստատութեամբ։ Եպիսկոպոսական բարձր աստիճանի կոչուելը լինում է առաջարկութեամբ պատրիարքի ս. Սինոդի ընդհանուր ժողովով 35 տարեկան այն կուսակրօն հոգևորականներից, որոնք իրենց վարքով և ցոյց տուած կառավարչական ընդունակութեամբ ու մատուցած ծառայութեամբ յայտնի են։ Առաջնորդական փոխանորդ կարգելիս ի նկատի է առնւում իրեն թեմական առաջնորդի կարծիքը, իսկ առաջնորդ կարգելիս՝ նոյն շրջանի մետրոպոլիտի կարծիքը։ Կարելի է նաև ուշադրութեան առնել թեմի ժողովրդի միջնորդութիւնը։ Սակայն ոչ այդ կարծիքներն և ոչ էլ ժողովրդի միջնորդութիւնը պարտաւորական նշանակութիւն չունին ս. Սինոդի համար։ Իբրև թեկնածուներ առաջնորդական գահի կարող են լինել փոխանորդներն և այլ եպիսկոպոսներ, նմանապէս և այն հոգևորականները, որոնք թէև չունեն եպիսկոպոսական աստիճան՝ բայց յայտնի են իրենց օգտակարութեամբ։ Պետերբուրգի և Կիևի միտրապոլիտների և Վրաստանի էկզարխի կարգումն լինում է Անուանական Բարձրագոյն հրամանով յանուն ս. Սինոդի։

Թեմի կառավարութիւնը յաջող տանելու համար ժողովն որոշել է իւրաքանչիւր թեմում առաջնորդներին կից ունենալ թեմական խորհուրդ։ Այդ խորհուրդի նպատակն է միջոց տալ առաջնորդին զանազան հարցերի նկատմամբ մանրամասն իմանալու թեմի տեղական զանազան գիտակ անձանց դիտողութիւններն ու կարծիքները։ Խորհուրդը գումարւում է առաջնորդի անմիջական նախագահութեամբ պահանջուած դէպքում։

Թեմական խորհրդի մշտական անդամները կազմում են՝ փո-

խանորդ եպիսկոպոսները։ Մայր եկեղեցու աւագ քահանան, թեմական կառավարութեան նախագահը, Հոգևոր Սեմինարիայի վերատեսուչը, հովուական ուսումնարանի կառավարիչը, թեմական ուսումնարանական խորհրդի նախագահը, եկեղեցական-ծխական ուսումնարանների թեմական տեսուչը, թեմական քարոզչական առաքելութիւն կատարողներն և վերջապէս թեմական կառավարութեան մէջ պաշտօնավարող պետութեան ներկայացուցիչը։ Թեմական խորհրդին կարող են մասնակցել թեմակ. Առաջնորդի հրաւէրով նաև վանքերի վանահայրերը, ծառայած հոգևորականներ, Հոգևոր դպրոցների ուսուցիչները, նոյնպէս և տեղական քաղաքացիական իշխանութեան և աշխարհական դասակարգի ներկայացուցիչները։

Թեմական խորհրդների զբաղմանց առարկայ կարող են լինել այն բոլոր հարցերը, որոնք վերաբերում են թեմի կրօնական-բարոյական խնդիրներին, թեմի կրթական գործերին, հոգևորականութեան հովուական գործունէութեան, հոգևոր-դպրոցական հաստատութիւնների վիճակին՝ նրանց բարոյականի և նիւթականի վերաբերեալ, եկեղեցական ծխական կեանքի դրութեան, մատաղ սերնդի դաստիարակչական գործին, և այլն։

Վ.ին. կոնսիստորիաների բարեփոխութիւնը։ Սոյն տարուայ փետրվար ամսում կայացել է խորհրդակցութիւն նախագահութեամբ Ֆինլանդիայի Սերգէյ արքեպիսկոպոսի։ Բացի սովորական անդամներից՝ ներկայ են եղել նաև Կիևի մետրոպոլիտ Ֆլաւիան, Սինոդի աւագ պրոկուրոր Սաբլեր, և այլ ուրիշները։ Հերթական հարցն եղել է այժմեան կոնսիստորիաների բարեփոխութեան խնդիրը։ Խորհրդակցութիւնն ընդունել է՝ որ կոնսիստորիաների փոխարէն պէտք է հաստատուեն Թեմական կառավարութիւններ։ Կոնսիստորիաների գործերի մի մասը կարելի է յանձնել նոր հաստատուելիք թեմական առաջնորդների դիւանատունը, իսկ դատաստանական գործերն էլ կարելի է յանձնել առանձին բեմական դատարան։ Թեմական կառավարութիւն կոչուած նոր հաստատութիւնը գլխաւորապէս ներկայացնում է զուտ վարչական հաստատութիւն։ Բացի թեմական կառավարութեան մշտական անդամներից կը նշանակուի առանձին նախագահ։ Նախագահ նշանակելու հարցը ակզիք է տուել կարծիքների տարաձայնութեան։ Ոմանք ընդունելով թեմական կառավարութեան կարևոր նշանակութիւնը, գտնում են՝ որ նորա նախագահը պէտք է նշանակուի անմիջապէս ս. Սինոդի կողմից և գտնուի վերջինիս հսկողութեան ներքոյ։

Ուրիշները նկատելով՝ որ դորանով Առաջնորդի իշխանութիւնը կարող է սահմանափակուիլ՝ բարւոք՝ են տեսնում որ Թեմական Կառավարութեան նախագահը նշանակուի ոչ թէ Սինոդի կողմից, այլ տեղական առաջնորդից։ Այս վերջին կարծիքը գերակշռող է եղել, ուստի և խորհրդակցական ժողովը որոշել է թոյլ տալ թեմական առաջնորդին թեմական կառավարութեան նախագահ նշանակելու նոյն կառավարութեան անդամներից մէկին։ Իսկ կառավարութեան անդամները նշանակւում են ս. Սինոդի կողմից առաջարկութեամբ թեմական առաջնորդի։

Ոչ կառավարութեան նախագահն և ոչ էլ նորա անդամները չեն կարող վարել դպրոցական խորհուրդների, հոգևորականների համագումարի, վերաստուգիչ յանձնաժողովների, մոմի գործարանների կառավարութեան նախագահական պաշտօնները և ոչ էլ գործակալական պաշտօն։ Ժողովը որոշել է սահմանափակել նաև թեմական կառավարութեան անդամների գործունէութիւնը իբրև կրօնուսոյց և դասատու հոգևոր դպրոցներում։ Նոքա 12 դասից աւելի չեն կարող ունենալ շաբաթական։

Արտակարգ կարևոր դէպքերում ս. Սինոդի թոյլտուութեամբ հաստատւում են ժամանակաւոր թեմական նստաշրջաններ, որտեղ քննութեան կենթարկուեն աւելի կարևոր բարդ հարցեր։

Ամուսինների անջատ կենակցութիւնը։ Երկար վիճաբանութիւնից յետոյ Պետական Դումայում վերջապէս ընդունուած է ամուսնացած կանանց իրաւունքների ընդարձակման օրինագիծը։ Այս նոր ընդունուած օրէնքով իւրաքանչիւր ամուսնացած կին իրաւունք ունի, անկախ իւր ամուսնու համաձայնութիւնից, ունենալ իւր առանձին ապրելու վկայականը։ Այսպիսով անցաթուղթն այլ ևս պարտաւորիչ կերպով չէ կապում կնոջ իւր մարդու հետ և փաստօրէն ամուսինների հեռանալը զանազան քաղաքներ միշտ հնարաւոր է։ Եթէ ամուսինները ապրում են իրարից առանձին, այդ դէպքում կինն իրաւունք ունի անկախ կերպով իւր վիճակը տնօրինելու, մանել ծառայութեան և այլն։ Բայց այնուամենայնիւ պահպանւում է առաջուայ պէս և մարդու իրաւունքը և կամ առհասարակ բաժանուած ամուսինների իւրաքանչիւրի իրաւունքը՝ պահանջելու վերականգնելու միասին կենակցութիւնը։ Բայց այդ իրաւունքը կարելի կը լինի վերականգնել միայն դատաստանական կարգով, ըստ որում նա ստանում է իւր սահմանափակումները։ Այսինքն. եթէ դատարանը ընդունի, որ միասին կենակցութիւնը ամուսիններից մէկի համար եղել է անտանելի, այդ դէպքում

միասին կենակցելու ցանկութիւն յայտնող ամուսնու պահանջը կը մերժուի, այսինքն ամուսինների անջատ ապրելը ճանաչում է օրէնքը։

Միասին կենակցութիւնը ճանաչուում է անտանելի ամուսնու համար, երբ վարուում են նորա հետ չափազանց դաժան, կամ ամուսնու կողմից՝ կամ ուրիշ ամուսնութիւնից ծնած երեխաների կողմից, և կամ առհասարակ երբ ամուսիններից մէկի կողմից խախտուում են ամուսնութեամբ նորա վրայ դրուած պարտականութիւնները, ինչպէս օրինակ նորա անազնիւ և անբարոյական կեանքի շնորհիւ, երբ ամուսիններից մէկը ունենում է այդպիսի հիւանդութիւն, որը կարող է վտանգաւոր դառնալ միւս ամուսնու առողջութեան համար, կամ սերնդին պատճառի ծանր հոգեկան հիւանդութիւն։ Բացի զորանից միասին կենակցութիւնը կարող է դառնալ անտանելի կնոջ համար, եթէ նա բռնուած է այնպիսի հիւանդութեամբ, որի ընթացքում ամուսնական կեանքը կարող է լինել վտանգաւոր նորա կեանքի կամ առողջութեան համար։ Վերոյիշեալ խնդիրներն ամուսնական անջատ կեանքի վերաբերեալ ծառայում են նաև յայտանշան անջատուած ամուսինների նիւթական յարաբերութիւններն որոշելիս և նոցա իրաւունքն իրենց զաւակների վերաբերեալ։ Կինը ստանում է իրաւունք ապահովուելու մարդուց՝ երբ ամուսնական կեանքը դառնում է անտանելի մարդու յանցանքի պատճառով և կամ կնոջ հիւանդութեան դէպքում։ Նոյն կերպ որոշուում է և նրանց իրաւունքը զաւակների նկատմամբ, ի նկատի առնելով յանցաւոր կողմը։

Կանանց անջատ կենակցութեան համար եղած այս որոշումները Պետական Դումայում, որոնք արդեն օրինական ընթացք են ստացել, ընդհանուր զօրութիւն ունեն Պետութեան բոլոր դատաւորութեան պատկանող անձանց համար։

Սաղմոսասացների դասընթացք։ Օմսկի թեմական առաջնորդ Անդրօնիկ արքեպիսկոպոսի նախաձեռնութեամբ առաջնորդական տանը բացուել է սաղմոսասացների դասընթացք։ Սկզբնական նախապատրաստութիւն ի նկատի են ունեցել 15 հոգու համար, որոնք պէտք է ապրեն առաջնորդական տանը, խիստ ենթարկուելով այն կարգ ու կանոնին, որոնք սահմանուած են նրանց համար։ Բոլոր կուրսիստները պէտք է առաւօտեան 6 ժամին արթնանան և գնան ընդհանուր աղօթատունը, ապա խմում են թէյ և պարապում են իրենց դասերը՝ պատրաստելով մինչև ժամը 8 առաւօտեան։ Որից յետոյ գնում են պատարագի, մասնակցութիւն ունենալով երգեցողութեան ժամանակ և գրքեր կարդալիս։ Պատարագից յետոյ

սկսում են նոցա պարապմունքները—լինում են կամ դասախոսութիւններ և կամ գործնական պարապմունք կրօնից (3 դաս) պատմութիւնից եկեղեցու, երգեցողութիւնից, մուզիկայից և եկեղեցական գրագրութիւնից և այլն։ Պարապմունքից յետոյ 1 ժամ 15 րոպէին լինում է ճաշ, ապա հանգիստ։ Ժամը 4-ին գնում են երեկոյեան ժամերգութեան մասնակցելու և ապա մինչև ժամը 9 երեկոյեան զբաղւում են իրենց պարապմունքներով։ Կուրսիստների պահպանութեան համար թեմի վիճակային գումարից յատկացուած է որոշ գումար, իսկ իւրաքանչիւր սովորող վճարում է իւր սեպհական միջոցներից ամսական 25 ռուբլի 7 ռուբլի էլ անկողնու ծախս, իսկ 3 ռուբլի էլ մուզիկայի համար։

Այսպիսով Օմսկի արքեպիսկոպոսի բարի նպատակն է միջոց տալ՝ որ թեմի քահանաները ունենան աւելի կրթուած և պահանջուած եկեղեցական գործնական գիտելիքներով օժտուած սաղմոսասացներ։ Իսկապէս սաղմոսասացն ամենակարևոր օգնականն է քահանայի, առանց որի վերջինս ծիսակատարութեանց ժամանակ մեծ նեղութիւններ կարող է կրել։ Իսկ իւրաքանչիւր իւր կոչման բարձրութեան վրայ կանգնած քահանայ կաշխատի ունենալ վերոյիշեալ պատրաստութեան տէր օգնականներ։ Չէ՞ որ սաղմոսասացն եկեղեցում կարդում և երգում է ի դէմս ներկայ եղող ժողովրդեան՝ հետևապէս նախ նա պէտք է կարդայ գեղեցիկ առոգանութեամբ և միանգամայն հասկանալի։ Ինչպիսի բարոյական յատկութիւններ պահանջւում է քահանայից՝ նոյնը պէտք է երևայ նաև սաղմոսասացի մէջ, չէ՞ որ երկուսն էլ կոչուած են Աստուծոյ տաճարում ծառայելու և բարի օրինակ լինելու ժողովրդեան։

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Կաթոլիկ եպիսկոպոսների հոգացողութիւնը բարեների մասին։ Գերմանական եպիսկոպոսների հովուական թղթերը, որոնք հրատարակուեցին Ֆուլդում վերջին համագումարի ժամանակ, սուրբ Բոնիֆացիայի գերեզմանի մօտ, վերաբերւում են ընտանիքի և երեխաների դաստիարակութեան վերաբերեալ հարցերին։ Վերջին ժամանակներում Գերմանիայում իւրաքանչիւր տարի ծնածների թուերի յաջորդաբար սահմանափակումն իւր վրայ դարձրեց նաև եկեղեցու հայրերի ուշադրութիւնը։ 1876 թ. Գերմանիայում 1000 մարդուն գալիս էր 42 ծնունդ, իսկ 1911 թ. միայն 29։ Այդպիսի տխուր և վտանգ սպառնացող երևոյթի գլխա-